

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առևտրային գաղտնիքի պաշտպանությունը մի կողմից ենթադրում է առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության արտահոսքի կանխման պայմանների ստեղծում, այն է՝ գաղտնիության ռեժիմի ապահովման միջոցների ձեռնարկում, մյուս կողմից՝ նման արտահոսքի և մեղավոր անձանց հաստատման դեպքում իրավական պատասխանատվություն (քաղաքացիաիրավական, աշխատանքային, վարչական և քրեական) կիրառելու հնարավորության առկայություն:²

Հարկ է ընդգծել, որ առևտրային գաղտնիքի պաշտպանության բնույթը և նրա հրապարակման համար պատասխանատվությունը որոշվում են՝ ելնելով առևտրային գաղտնիքի սուբյեկտից:³

Քաղաքացիական իրավունքի տեսության համաձայն՝ սուբյեկտին օբյեկտիվ իրավունքով տրված «իրավաբանական հնարավորությունները, որպես սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի բաղկացուցիչ մասեր կոչվում են իրավագործություններ»⁴: Անդրադառնալով առևտրային գաղտնիքի բովանդակությունը կազմող իրավագործություններին՝ հարկ է ընդգծել, որ տարբեր հեղինակներ հանդես են գալիս տարբեր **դասակարգումներով**: Տ. Կ. Բարսեղյանը և Ա. Ա. Հովհաննիսյանը, օրինակ՝ առանձնացնում են **որոշակի տեղեկատվությունը գաղտնիք համարելու իրավունքը, տեղեկատվության գաղտնիության պահպանությունն ապահովելու համար անհրա-**

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյան:

² Տե՛ս Хлевицкая Т. Б., Коммерческая тайна предприятия, конспект лекций для студентов дневной формы обучения специальности 7.050107 «Экономика предприятия», Донецкий государственный университет экономики и торговли, им. М. Туганбарановского, кафедра экономики предприятия, Донецк, 2004, էջ 28:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նաև, Гражданское право, В 4 т. Том 1. Общая часть, Учебник /Отв. ред. проф. Е. Л. Суханов 3-е изд. М., Волтерс Клувер, 2004, էջ 121:

ժեշտ, օրենքով չարգելված, ցանկացած միջոց և եղանակ օգտագործելու իրավունքը, երրորդ անձանցից առևտրային գաղտնիք համարվող տեղեկություններին ապօրինի տիրանալու գործողություններից ձեռնպահ մնալ պահանջելու իրավունքը, ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները հատուցել պահանջելու իրավունքը և սեփական հայեցողությամբ, առևտրային գաղտնիքն ազատորեն տնօրինելու իրավունքը:¹ Այլ հեղինակներ այլ (թե՛ ավելի լայն, թե՛ ավելի նեղ) դասակարգումներ են ներկայացնում՝ որպես առևտրային գաղտնիքի բովանդակությունը կազմող իրավագործություններ առանձնացնելով, օրինակ, պահանջելու իրավագործությունը, սեփական գործողությունների իրավագործությունը և պաշտպանության իրավագործությունը²:

Այլ հեղինակներ առևտրային գաղտնիքի իրավագործություններից հիմնականը կոչում են փաստական բնույթի սեփական ակտիվ գործողությունների իրավատիրոջ հնարավորություն՝ ուղղված տեղեկատվության օգտագործման միջոցով շահույթի ստացմանը, ինչպես նաև՝ նրա իրավաբանական ճակատագրի որոշմանը:³ Այս իրավագործության հասկացությունը կարող է արտահայտվել Օ. Ս. Իոֆեի խոսքերով. «Մուբլեկտիվ իրավունքում չարգելված այդ իսկ պատճառով ընդանուր առմամբ օրենքով թույլատրված սեփական գործողությունների իրականացման անհրաժեշտությունը ծագում է միայն այն ժամանակ, երբ այդ գործողությունների կատարումը անհնարին է դառնում առանց երրորդ անձանց աջակցության ապահովման կամ հակագործողության վերացման (իրական կամ հնարավոր): Մուբլեկտիվ իրավունքը հանգում է ոչ թե իրավագործի սեփական գործողությունների թույլատրելիությանը, այլ այդ գործողությունների իրակա-

¹ Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., Հովհաննիսյան Ա. Ա., Մտավոր սեփականության իրավունք, Ոստմնական ձեռնարկ, Երևան 2012թ., էջ 248:

² Տե՛ս Гуляева Наталья Сергеевна, коммерческая тайна в предпринимательской деятельности: сравнительно-правовое исследование законодательства РФ, зарубежных государств и международно-правового регулирования, Специальность 12.00, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2002, էջ 20:

³ Տե՛ս Северин Роман Витальевич, Механизм защиты прав на коммерческую тайну, Специальность 12.00.03, Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 62:

նացման հնարավորության ապահովմանը»:¹ Մեփական գործողությունների իրականացման իրավագործությունը առևտրային գաղտնիքի իրավունքի իրավատիրոջ կողմից համարվում է հիմնական և իր բովանդակությամբ բավականին մշակված իրավագործություն: Այս իրավագործությունը ավանդաբար ձևակերպվում է որպես տեղեկատվության «օգտագործում և տնօրինում»² և ներառում է հետևյալ տարատեսակները՝ **տեղեկատվության գաղտնիության պահպանմանը ուղղված միջոցների ձեռնարկման հնարավորությունը**, տեղեկությունների՝ **առևտրային գաղտնիք համարելու իրավունքը**, կորպորատիվ ակտերի (ներքին աշխատանքային կարգի կանոններ, տեղեկատվության գաղտնիության պաշտպանության վերաբերյալ դրույթները, «Առևտրային գաղտնիք» գրիֆը կրող փաստաթղթերի հետ աշխատանքի կանոններ և այլն) մշակման իրավունքը, աշխատանքային պարտականությունների ուժով տեղեկություններին տիրապետող անձանց վրա նրանց չիրապարակման պարտականություն դնելու հնարավորությունը:

Տ. Կ. Բարսեղյանի և Ա. Ա. Հովհաննիսյանի կողմից առանձնացված դասակարգումը համարելով թերևս առավել նպատակահարմար՝ փորձենք իրավագործությունների առանձին տեսակները ներկայացնել նրա առաջարկած տրամաբանությամբ:

Սուսցին և, թերևս, ամենահիմնական իրավունքը **որոշակի տեղեկատվությունը գաղտնիք համարելու իրավունքն** է: Այս իրավունքը պատկանում է իրավատիրոջը պայմանով, որ նա այն ստացել է օրինական ճանապարհով և չի խախտում օրենքով սահմանված սահմանափակումները:

Ինչպես արդեն մատնանշել ենք, առևտրային իրավունքի սուբյեկտն իրավունք ունի իր գործունեությանը, արտադրության կազմակերպմանը, տեխնոլոգիական գործընթացներին, տեխնիկային վերաբերող ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ օրենքով արգելվածների) համարել առևտրային գաղտնիք և պահպանել բա-

¹ St 'u Иоффе О. С., Правоотношение по советскому гражданскому праву // Избранные труды по гражданскому праву, Из истории цивилистической мысли, Гражданское правоотношение, Критика теории «хозяйственного права». М., «Статут», 2000, էջ 614:

² St 'u Дозорцев В. А., Понятие секрета промысла (ноу-хау) // Вестн. Высшего Арбитражного Суда Российской Федерации. No 8. 2001, էջ 111:

ցահայտումից: Տեղեկատվությանը տիրապետողն ինքն է որոշում ինչպիսի տեղեկատվությունը համարել առևտրային գաղտնիք և ինքն էլ սահմանում է դրա պահպանության կանոնները:¹

Կարծում ենք՝ որպես այս իրավագործության բաղադրիչ՝ էական նշանակություն ունի կորպորատիվ ակտերի մշակումը, որն իր հերթին կարող է ներառել ներքին աշխատանքային կարգի կանոններ, տեղեկատվության գաղտնիության պաշտպանության վերաբերյալ դրույթներ, «Առևտրային գաղտնիք» գրիֆը կրող փաստաթղթերի հետ աշխատանքի կանոններ և այլն: Առևտրային գաղտնիքի պաշտպանության ապահովման անհրաժեշտ միջոց է աշխատանքային պարտականությունների ուժով տեղեկություններին տիրապետող անձանց կողմից չհրապարակման պարտականության ստանձնումը: ՀՀ աշխատանքային օրենսգրքը 122-րդ հոդվածով նախատեսում է, որ գործատուն իրավունք ունի աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում սեփական նախաձեռնությամբ լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը: Ինչից ելնելով՝ աշխատակիցների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերում կարող են ներառվել գաղտնիության և նրա խախտման համար պատասխանատվության վերաբերյալ դրույթներ: Առևտրային գաղտնիքի իրավատերը կարող է կիրառել աշխատավայրի պաշտպանության, գաղտնալուծումից հեռախոսային բանակցությունների պաշտպանության և տեղեկատվության արտահոսքի այլ հնարավոր ճանապարհների նկատմամբ հսկողության օրենքով թույլատրվող տեխնիկական ցանկացած միջոցներ:

Սակայն, քննարկվող իրավագործությունը անսահմանափակ չէ: Ցանկացած պետություն իրավունք ունի պետական և հանրային շահերի պաշտպանության նպատակով պետական և ռազմական անվտանգության ապահովման համար, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցությունը կանխելու և սպառողների շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ոչ միայն հսկողություն իրականաց-

¹ Տե՛ս Բարսեղյան Ս. Գ., Հովհաննիսյան Ա. Ա., Մտավոր սեփականության իրավունք, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012 թ., էջ 249:

նել գործարարների գործունեության նկատմամբ, այլև սահմանել տեղեկատվության այն տեսակները, որոնք ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք համարվել չեն կարող:¹

Երկրորդ առևտրային գաղտնիքին տիրապետողն իրավասու է **օգտագործել տեղեկատվության գաղտնիության պահպանությունն ապահովելու համար անհրաժեշտ, օրենքով չարգելված, ցանկացած միջոց և եղանակ**: Այդ միջոցների ընտրության իրավունքը պատկանում է միայն գաղտնիքը տիրապետողին: Նա կարող է օգտագործել տեխնիկական միջոցներ, մշակել կազմակերպական միջոցառումներ, գաղտնիքի պահպանության հրահանգներ, փաստաթղթերի հետ աշխատելու հրահանգներ, գաղտնիքի հետ առնչվող աշխատակիցների վարքագծի կանոններ, գաղտնիքի հրապարակման համար պատասխանատվության միջոցներ և այլն:² Նրանց թվին են դասվում նաև կադրերի ընտրության, փաստաթղթաշրջանառության կազմակերպման, անցագրային և ներօբյեկտային ռեժիմի սահմանման և այլնի հետ կապված տարաբնույթ միջոցները:

Հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ՎԴ/1696/05/09 վարչական գործով 2010 թվականի մայիսի 27-ին դռնբաց դատական նիստում՝ քննելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Հասարակական կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 07.12.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Հասարակական կազմակերպության հայցի ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) Կազմակերպության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջների մասին, հաստատված համարելով, որ Կազմակերպությունը պետական ոչ առևտրային կազմակերպություն է և առևտրային շահ չունի, սակայն առևտրային շահ ունեն այն կազմակերպությունները, որոնց հետ Կազմակերպությունը կնքել է պայմանագրեր, հանգել է այն հետևության, որ Կազմակերպությունը, հայցվորին տրամադրելով նրա պահանջած տեղեկությունը, կհրապարակեր այլ

¹ Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., Հովհաննիսյան Ա. Ա., Մտավոր սեփականության իրավունք, Ոստմնական ձեռնարկ, Երևան 2012 թ., էջ 249:

² Տե՛ս նույն տեղում:

ընկերությունների առևտրային գաղտնիքը, ուստի Կազմակերպությունը գործել է օրենքի շրջանակներում, հետևաբար նրա գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու հիմքեր չկան:¹ Այդպիսով, դատարանը տեղեկատվությունը որպես առևտրային գաղտնիք որակելու հարցը լուծելիս դիտարկել է ոչ միայն տվյալ գործով պատասխանող կողմի՝ ոչ առևտրային կազմակերպության («Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի) շահերը, այլև վերջինիս գործընկեր այլ կազմակերպությունների առևտրային շահերը՝ կանխելով հիշյալ կազմակերպությունների հետ ևս առնչվող առևտրային տեղեկատվության հնարավոր հրապարակման հետևանքով վերջիններիս վնաս պատճառելը և վերջիններիս իրավունքների հնարավոր խախտումները:

Երրորդ՝ առևտրային գաղտնիքին տիրապետողն (իրավատերը) իրավունք ունի **պահանջելու երրորդ անձանցից՝ ձեռնպահ մնալ առևտրային գաղտնիք համարվող տեղեկություններին ապօրինի տիրանալու գործողություններից:**²

Հարկ է ընդգծել, որ առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի իրավատիրոջը պատկանող պահանջելու իրավագործությունը արտահայտվում է առևտրային գաղտնիքի երրորդ անձանցից առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման ցանկացած ոչ օրինական միջոցից, բայց ոչ այդ տեղեկությունների ստացման իրավաչափ միջոցներից, զերծ մնալու իրավատիրոջը պատկանող պահանջի հնարավորության մեջ, որոնց շարքին իրավակիրառ պրակտիկան ավանդաբար դատում է անկախ հայտնագործությունը, հետադարձ ինժեներիան և բարեխիղճ ձեռքբերումը:³ Այդպիսի իրավագործություններ հիմնականում բնութագրական են առևտրային գաղտնիքի նկատմամբ բացառիկ իրավունքի օտարման կամ նրա օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված պայմանագ-

¹ St 'u <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=59779> կայքէջում:

² St 'u Բարսեղյան Տ. Գ., Հովհաննիսյան Ա. Ա., Մտավոր սեփականության իրավունք, Ոստմնական ձեռնար, Երևան, 2012 թ., էջ 249:

³ St 'u Гуляева Наталья Сергеевна, коммерческая тайна в предпринимательской деятельности: сравнительно-правовое исследование законодательства РФ, зарубежных государств и международно-правового регулирования, Специальность 12.00, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2002, էջ 21:

րային հարաբերությունների համար: ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը պաշտպանություն տրամադրվում է միայն տեղեկատվությանը ապօրինի ճանապարհներով տիրանալու դեպքում: Խոսքը գնում է երրորդ անձանց կողմից առանց տեղեկատվության տիրապետողի համաձայնության տեղեկատվության օգտագործման արգելքի մասին: Եթե տեղեկատվությունը անձի կողմից ստացվել է առանց նրա տիրապետողի թույլտվության, սակայն, ինքնուրույն, սեփական գործունեության ընթացքում, ստացողը խախտող չի համարվում:

Նշված իրավագորությունը, ըստ Վ. Պ. Գրիբանովի, կայանում է իրավագոր անձի կողմից իրավախախտի նկատմամբ օրենքով թույլատրվող սեփական հարկադրանքի ներգործության միջոցների օգտագործման, փաստական կարգի սեփական գործողություններով իրեն պատկանող իրավունքը պաշտպանելու (քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն), անմիջականորեն իրավագոր անձի կողմից իրավախախտի նկատմամբ իրավաբանական բնույթի օպերատիվ գործողություններ կիրառելու; իրավասու պետական կամ հասարակական մարմիններին պարտապան անձին որոշակի վարքագծի դրսևորման պարտավորեցնելու պահանջով դիմելու հնարավորությունների մեջ: Սակայն, նշված հնարավորությունները, ինչպես նշում էր Վ. Պ. Գրիբանովը, անխզելիորեն փոխկապակցված են և տարբեր համադրություններով ներառվում են սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության իրավագործության մեջ:¹

Անդրադառնալով պաշտպանության իրավագործության բովանդակությանը՝ հարկ է ընդգծել, որ պաշտպանության իրավագործությունը կարող է իրագործվել ինքնապաշտպանության, իրավախախտի նկատմամբ օպերատիվ ներգործության միջոցների, ինչպես նաև դատական և վարչական գործընթացներ ենթադրող ընթացակարգային ձևերով: Միաժամանակ կարևորագույն նշանակություն ունի ինքնապաշտպանությունը՝ առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի պաշտպանության կանխարգելիչ միջոցների ձեռնարկման ձևով:²

¹ St 'u Грибанов В. П., Осуществление и защита гражданских прав, Изд. 2-е, М., 2001, էջ 107:

² St 'u Гуляева Наталья Сергеевна, коммерческая тайна в предпринимательской деятельности: сравнительно-правовое исследование законодательства РФ,

Տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե տեղեկատվությունը երրորդ անձանց կողմից օգտագործելն արգելելու, այլ անօրինական կարգով այլ անձի պատկանող առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվությունն օգտագործելու մասին: Բանն այն է, որ առևտրային գաղտնիքին իրավատերն օգտվում է դրա օգտագործման ոչ թե իրավաբանական այլ փաստացի մենաշնորհից: Այդ պատճառով, անկախ կամ հակառակ գաղտնիքին տիրապետողի թույլտվությունից, այդպիսի տեղեկություններն ինքնուրույն ու օրինական ստացած անձն իրավունք ունի դրանք օգտագործել՝ անկախ այդ տեղեկատվությունը տիրապետողի իրավունքներից, ու վերջիններիս հանդեպ պարտականություններից, ու վերջիններիս հանդեպ պատասխանատվություն չի կրում դրանց օգտագործման համար (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք¹ հոդված 1165, կետ 4):²

Վերը շարադրվածից բխում է, որ գաղտնի տեղեկատվությունը ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունքի գոյությունը կախված է գաղտնիության պահպանվածությունից: Եթե տեղեկատվությունը ինչ-ինչ ճանապարհով հայտնի է դառնում երրորդ անձանց, ապա դադարում է գաղտնիք համարվելուց: Ասվածը չի նշանակում, որ գաղտնիք է համարվում միայն մեկ սուբյեկտին հայտնի տեղեկատվությունը: Նույն տեղեկատվությունը կարող է հայտնի լինել և օգտագործվել միմյանցից անկախ գործող տարբեր սուբյեկտների կողմից: Բացի այդ, տեղեկատվությունը կհամարվի գաղտնիք, եթե նրանցից յուրաքանչյուրը ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ դրա գաղտնիքությունը պահպանելու համար:³

Չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի անդրադառնում այն հարցին, թե տեղեկատվության ստացման որ մեթոդներն են համարվում ապօրինի՝ սովյալ հարցը բարդություն չի ներկայացնում: Աշխարհում նման մեթոդներին են դասվում արդյունաբերական

зарубежных государств и международно-правового регулирования, Специальность 12.00, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2002, էջ 21:

¹ Տե՛ս՝ ՍՀԴՏ 1998.08.10/17(50) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:

² Տե՛ս՝ Բարսեղյան Ս. Գ., Հովհաննիսյան Ա. Ա., Մտավոր սեփականության իրավունք, Ոստումական ձեռնարկ, Երևան, 2012 թ., էջ 250:

³ Տե՛ս՝ նույն տեղում:

լրտեսությունը, առևտրային գաղտնիքի իրավատիրոջ աշխատակիցների կաշառելու միջոցով գաղտնիքիներին տիրանալը, կապի հեռահաղորդակցության ուղիների գաղտնալուծումը, նամակագրության բացումը, տեղեկատվություն գողանալը և այլն: Նշված եղանակների մի մասը որպես չբացահայտված տեղեկատվության ձեռքբերման, օգտագործման կամ բացահայտման գործարար շրջանառության սովորույթներին հակասող եղանակներ իրենց օրենսդրական ամրագրումն են ստացել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի¹ 16-րդ հոդվածի 4-րդ մասում: Վերջինս նման եղանակներ է ճանաչում արդյունաբերական, առևտրային լրտեսությունը կամ դրան հարկադրումը, չբացահայտված տեղեկատվությանն առնչվող պայմանագրի խախտումը, լուծումը կամ դրան հարկադրումը; խորհրդապահության խախտումը կամ դրան հարկադրումը; չբացահայտված տեղեկատվության ձեռքբերումը երրորդ անձի կողմից, որը գիտեր կամ կարող էր իմանալ, որ դա ենթադրում է վերոհիշյալ կետերում նշված գործողությունների կատարում Նման գործողությունները նաև վարչական իրավախախտումների կամ քրեական հանցակազմերի մաս են կազմում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգիրք² 199-րդ հոդված):

«Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգի»³ «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման մեխանիզմները» վերտառությամբ VII բաժինը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման իրավական մեխանիզմները, ի թիվս այլ մեխանիզմների, ներառում են. Հայաստանի Հանրապետության **նորմատիվ իրավական ակտերի մշակումը և ընդունումը**, որոնք սահմանում են ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պատասխանատվությունը՝ տե-

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2000.12.15/30(128) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք:

² Տե՛ս ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք:

³ Տե՛ս ՀՀՊՏ 2009.07.15/35(701), Հաստատված «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ նախագահի ՆԿ-97 կարգադրությամբ, ուժի մեջ մտած 26.06.2009 թ.-ին:

ղեկատվության չարտոնված ստացման, դրա անօրինական պատճենահանման, աղավաղման և անօրինական օգտագործման, ոչ հավաստի տեղեկատվության միտումնավոր տարածման, **գաղտնի տեղեկատվության անօրինական բացահայտման, հանցավոր և շահադիտական նպատակներով ծառայողական կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների օգտագործման համար:** Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների, սկզբունքների և հիմնական ուղղությունների նկատմամբ պաշտոնական մոտեցումների այս համակարգի ընդունումը համարում ենք ժամանակի մարտահրավերներով պայմանավորված համապետական նշանակության քայլ՝ միտված Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակմանը և իրագործմանը: Քննարկվող փաստաթղթի անդրադարձը առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների ապօրինի օգտագործմանը հիմք է զբաղակցնելու, որ առևտրային գաղտնիքը պետական, ծառայողական և բանկային գաղտնիքի հետ միասին գտնվում է պետության հոգածության ներքո: Այնուամենայնիվ գտնում ենք, որ պետությունը քննարկվող փաստաթղթում չպետք է բավարարվեր նշված ոլորտում իրավական ակտերի մշակման ու ընդունման անհրաժեշտությունը միայն ընդգծելով. կարծում ենք այս ոլորտների հիմնախնդիրների լուծումները կարող են տրվել **առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանության** գործուն մեխանիզմներ մշակելով և իրականացնելով:¹

Հաշվի առնելով, որ երրորդ անձանցից առևտրային գաղտնիք համարվող տեղեկություններին ապօրինի տիրանալու գործողություններից ձեռնպահ մնալ պահանջելու իրավունքը լիարժեք ամրագ-

¹ Հարկ ենք համարում նշել, ի տարբերություն ՀՀ-ի՝ ՌԴ Տեղեկատվական անվտանգության հայեցակարգի համաձայն՝ գիտության և տեխնիկայի ոլորտում ՌԴ տեղեկատվական անվտանգության հիմնական արտաքին սպառնալիքներից պետք է համարել **արտասահմանյան պետական և առևտրային ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության ակտիվացումը արդյունաբերական լրտեսության ոլորտում, նրա նկատմամբ հետախուզական և հատուկ ծառայությունների ներգրավմամբ:**

րում չի ստացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում՝ «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգով» առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսել, որ առևտրային գաղտնիքն օրինական հիմքերով տնօրինող անձը պետք է իրավունք ունենա արգելելու երրորդ անձանց օգտագործել չբացահայտված տեղեկատվությունը կամ դրա որևէ մասը, եթե այն բացահայտվել և երրորդ անձանց հայտնի է դարձել առանց առևտրային գաղտնիքի օրինական տիրապետողի իմացության կամ գրավոր թույլտվության, համաձայնության (ապօրինի բացահայտում): Ընդ որում պաշտպանության այդ եղանակը պետք է հասանելի լինի նաև այն դեպքում, երբ տեղեկատվության ապօրինի օգտագործողը բարեխիղճ ձեռք բերող է:¹

Այդ նպատակով «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգով» առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1165-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանել, որ չբացահայտված տեղեկատվության տնօրինողն իրավունք ունի բարեխիղճ ձեռք բերողից պահանջել օգտագործման, բացահայտման կամ տարածման անհապաղ դադարեցում»: Բացի այդ՝ հայեցակարգի հեղինակային խումբն առաջարկում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1165-րդ հոդվածի հոդվածի այն դրույթը, ըստ որի՝ «դատարանը, հաշվի առնելով չբացահայտված տեղեկատվության օգտագործման վրա բարեխիղճ ձեռք բերողի կատարած ծախսերը, կարող է դրա հետագա օգտագործումը թույլատրել հատուցելի ոչ բացառիկ լիցենզիայի պայմաններով»:²

Չորրորդ՝ գաղտնի տեղեկատվությունն ապօրինի հիմքերով ստացած, տարածած կամ օգտագործող անձից օրինական տիրապետող իրավունք ունի **պահանջել հատուցելու ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները**: Եթե գաղտնի տեղեկատվությունն ապօրինի օգտագործող անձն այն ստացել է տարածելու իրավունք չու-

¹ Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում -http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf

² Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում -http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf

նեցող անձից, որի մասին չգիտեր և պարտավոր չէր իմանալ (բարեխիղճ ձեռք բերող)։ Ապա գաղտնիք տեղեկատվության օրինական տիրապետողն իրավունք ունի բարեխիղճ ձեռք բերողից պահանջել այդ տեղեկատվության օգտագործմամբ պատճառված վնասների հատուցում՝ սկսած այն պահից, երբ բարեխիղճ ձեռք բերողն իմացել է, որ դրա օգտագործումն ապօրինի է (քաղաքացիական օրենսգրքի հոդված 1165)։¹

Գաղտնիք կազմող տեղեկատվության օրինաչափ տիրապետողն իրավունք ունի ապօրինի օգտագործողից պահանջել անհապաղ դադարեցնել դրա օգտագործումը։ Սակայն դատարանը, հաշվի առնելով այդ տեղեկատվության օգտագործման համար բարեխիղճ ձեռք բերողի կատարած ծախսերը, կարող է դրա օգտագործումը թույլատրել՝ հատուցելի՝ ոչ բացառիկ լիցենզիայի պայմանագրով։²

Համաձայն «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգի»՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված չէ չբացահայտված տեղեկատվությունը տնօրինողի իրավունքը՝ պահանջել դադարեցնել չբացահայտված տեղեկատվության օգտագործումը նաև բարեխիղճ ձեռք բերողից։ Ավելին՝ օրենսգրքի 1165-րդ հոդվածի 3-րդ մասը ներկայումս դատարանին իրավունք է վերապահում չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործող բարեխիղճ ձեռք բերողին թույլատրել հետագա օգտագործումը՝ հաշվի առնելով օգտագործման վրա կատարված ծախսերը։ Միջազգային փորձն այլ բան է հուշում և իրավախախտի կողմից կատարված ծախսերը, անկախ դրանց չափից, էական պայման չի համարվում հետագա օգտագործում թույլատրելու համար, քանզի այն հնարավորություն է ստեղծում չարաշահումների համար։ Ուստի՝ առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում։ Մասնավորապես, օրենքի 16-րդ հոդվածով կարգավորվում է չբացահայտված տեղեկատվության նկատմամբ անբարեխիղճ մրցակցության հետ կապված հարաբերությունները, որոնք, ըստ «Քաղաքացիական օրենսգրքի տասներ-

¹ Տե՛ս Բարսեղյան Տ. Գ., Հովհաննիսյան Ա. Ա., Մտավոր սեփականության իրավունք, Ոստմնական ձեռնարկ, Երևան, 2012 թ., էջ 251:

² Տե՛ս նույն տեղում:

րորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգի», համահունչ չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների հետ: Ուստի՝ «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգի» հեղինակներն առաջարկում են հստակեցնել, որ չբացահայտված տեղեկատվությունը կամ այդ տեղեկատվության որևէ մի մաս դրա օրինական տնօրինողի կողմից, վերջինիս իմացությամբ, համաձայնությամբ կամ թույլտվությամբ բացահայտվելու դեպքում (օրինական բացահայտում) այն կորցնում է իր ուժը՝ որպես առևտրային գաղտնիք և դառնում է հանրամատչելի տեղեկատվություն:¹

Հաշվի առնելով իրականացված վերլուծությունը և «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգում» բարձրացված հիմնախնդիրները՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքը լրացնել «Պատասխանատվությունը առևտրային գաղտնիքի ապօրինի օգտագործման համար» վերտառությամբ 1165-րդ հոդվածով: Այն է՝

«1. Առևտրային գաղտնիքն ապօրինի եղանակով ստացած, տարածած կամ օգտագործած անձը պարտավոր է այդ տեղեկատվության օրինական տնօրինողին հատուցել դրա ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները:

2. Եթե առևտրային գաղտնիքն օգտագործող անձն այն ստացել է բացահայտելու իրավունք չունեցող անձից, ապա առևտրային գաղտնիքի իրավատերը կամ վերջինիս համաձայնությամբ որևէ այլ օրինական տնօրինող իրավունք ունի ստացողից (այդ թվում բարեխիղճ ձեռք բերողից) պահանջել առևտրային գաղտնիքի.

1) օգտագործման, բացահայտման և (կամ) տարածման անհապաղ դադարեցում, և

2) օգտագործմամբ պատճառված վնասների հատուցում, իսկ բարեխիղճ ձեռք բերողի դեպքում՝ հաշվարկված այն պահից, երբ նա իմացել է օգտագործման անօրինական լինելու մասին և շարունակել է օգտագործել:»

¹ Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf

Հինգերորդ՝ առևտրային գաղտնիքին տիրապետողն ունի այն սեփական հայեցողությամբ, ազատորեն տնօրինելու իրավունք:¹

Նշված իրավագործությունն արտահայտվում է առևտրային գաղտնիքի նկատմամբ բացառիկ իրավունքի օտարման, արժեքավոր տեղեկատվության բացահայտման և նրա գաղտնիության ռեժիմի դադարեցման մեջ: Իրավատերը իրավունք ունի արտադրության գաղտնիքի նկատմամբ իրեն պատկանող բացառիկ իրավունքը ձեռքբերողին փոխանցել ցանկացած պահի, կամ հրապարակային կերպով բացահայտել առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները, եթե այդ ընթացքում չեն խախտվում կոնտրագենտների իրավունքները, կամ էլ լիցենզիոն պայմանագրով հաստատված սահմաններում առևտրային գաղտնիքի օգտագործման իրավունք տրամադրել երրորդ անձանց: Միաժամանակ, կողմերը պարտավոր են գաղտնիությունը պահպանել մինչև արտադրության գաղտնիքի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության դադարումը:

Առևտրային գաղտնիքի իրավատերը կարող է ցանկացած ժամանակ, բացահայտել գաղտնիք համարվող տեղեկատվությունը, եթե դրանով չի խախտի իր գործընկերների իրավունքները: Նա կարող է այդ տեղեկատվությունը զիջել այլ անձի, վաճառել, տեղեկատվության բովանդակությունը կազմող տեղեկություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն լիցենզիային պայմանագրով հանձնել այլ անձի (քաղաքացիական օրենսգիրք հոդված 1166): Եթե գաղտնիք համարվող տեղեկատվության օգտագործման իրավունքը լիցենզիային պայմանագրով հանձնվում է այլ անձի, ապա այդ անձը (լիցենզատուն) պարտավոր է պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ պայմանագրով ստացած տեղեկատվության գաղտնիության պահպանության համար և, լիցենզատուին հավասար, ունի երրորդ անձանց ապօրինի օգտագործումից այն պաշտպանելու իրավունք: Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, լիցենզատուն տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը կրում է նաև լիցենզային պայմանագիրը դադարեցնելուց հետո, եթե համապատաս-

¹ Տե՛ս Բարսեղյան Ս. Գ., Հովհաննիսյան Ա. Ա., Մտավոր սեփականության իրավունք, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012 թ., էջ 251:

խան տեղեկատվությունը շարունակում է մնալ չբացահայտված տեղեկատվություն:¹

Համաձայն «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգի»՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1166-րդ հոդվածի բովանդակությունից պարզ չէ, թե չբացահայտված տեղեկատվության նկատմամբ ինչպիսի իրավունքներ կարող են փոխանցվել մեկ այլ անձի: Սահմանված չեն պահանջներ այդպիսի գործարքի ձևի և բովանդակության նկատմամբ, մասնավորապես՝ գաղտնիությունը պահպանելու պահանջը և այլն:² Ուստի հայեցակարգի հեղինակները առաջարկում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հստակեցնել, որ չբացահայտված տեղեկատվությունը կարող է ինչպես օտարվել, այնպես էլ օգտագործման հանձնվել այլ անձի, սահմանել այն իրավունքները, որոնք կարող են փոխանցվել այլ անձի ու սահմանել վերջիններիս ծավալը, սահմանել պահանջներ այդպիսի գործարքի ձևի և բովանդակության նկատմամբ, օրինակ՝ գաղտնիությունը պահպանելու պահանջը: Նրանք կարծում են՝ հարկ է սահմանել, որ չբացահայտված տեղեկատվության նկատմամբ իրավունքի փոխանցման գործարքը պետք է կատարվի գրավոր, որի բովանդակությունը պետք է լինի գաղտնի (կոնֆիդենցիալ) և հրապարակման ենթակա չլինի, հստակեցնել, որ ինչպես տեղեկատվությունը տրամադրող, այնպես էլ ստացող անձինք պարտավոր են այն պահել գաղտնի, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:³

Հաշվի առնելով իրականացված վերլուծությունն ու «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգում» արձարծվող հիմնահարցերը, առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքը լրացնել **«Առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքը փոխանցելը» վերստառությամբ 1166-րդ հոդվածով՝ սահմանելով.**

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf

³ Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf

«1. Առևտրային գաղտնիքի իրավատերը կարող է առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքը գրավոր գործարքով ամբողջությամբ կամ մասնակիորեն օտարել այլ անձի կամ օգտագործման տրամադրել երրորդ անձանց:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործարքի կողմերի միջև այլ գրավոր համաձայնության բացակայության դեպքում, կողմերը պարտավոր են առևտրային գաղտնիքը շարունակել պահել գաղտնի ինչպես գործարքի գործողության ժամկետի ողջ ընթացքում, այնպես էլ դրա ժամկետն ավարտվելուց կամ պայմանագիրը լուծելուց հետո»:

Հարկ է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ ընդունված է նաև սեփական հայեցողությամբ, ազատորեն տնօրինելու իրավագործությունը առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության օգտագործման հնարավորության հետ (օգտագործման իրավագործություն) միավորել սեփական գործողությունների իրավագործության ներքո: Վերջինս առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի անքակտելի տարրն է: Միաժամանակ հարկ է նշել, որ տնօրինման իրավագործությունը կարող է գոյություն ունենալ օգտագործման իրավագործության օտարման և օգտագործման իրավագործության տրամադրման ձևով՝ վերջին դեպքում այն ամբողջապես պահպանելով նաև իրավատիրոջ համար: Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ շրջանառվում են գործարարական գործունեության մեջ սեփական գործողությունների իրավագործության իրագործման տարաբնույթ հնարավորություններ՝ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցում պայմանագրով, մասնավորապես՝ առևտրային գաղտնիքի փոխանցման մասին պայմանագրով, «խառը լիցենզիայով», «առևտրային կոնցեսիայի մասին պայմանագրով», ինչպես նաև գործարարական գործունեության իրականացման ոլորտում կողմերի հարաբերությունները կարգավորող մի շարք այլ պայմանագրերով, առևտրային գաղտնիքի («նոու-հաուի») օգտագործման իրավունքի ներառումը կանոնադրական կապիտալում, առևտրային գաղտնիքի («նոու-հաու»-ի) օգտագործման իրավունքի ներդրումը սովորական գործընկերության պայմանագրում որպես ա-

վանդ:¹ Նշված հնարավորությունների մի մասն իրենց օրենսդրական ամրագրումն են գտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Մասնավորապես, օրենսգրքի 1166-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ չբացահայտված տեղեկատվությանը տիրապետող անձը կարող է այդ տեղեկատվության բովանդակությունը կազմող տեղեկություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն **լիցենզային պայմանագրով հանձնել** այլ անձի:

Կարծում ենք՝ **առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը սեփական հայեցողությամբ օգտագործելու իրավագործությունը** անարդարացիորեն դուրս է մնացել առևտրային գաղտնիքի սուբյեկտին պատկանող իրավագործությունների ներկայացված շարքից: Օգտագործման իրավունքի ներքո պետք է հասկանալ այնպիսի գործողությունների իրականացման հնարավորությունը, ինչպիսիք են վերլուծական տեղեկատվության մշակումն ու ստացումը, բիզնես-պլանների կազմման ժամանակ, պայմանագրային աշխատանքում տեղեկությունների օգտագործումը և այլն: Արտադրության գաղտնիք պարունակող տեխնիկական մշակումների օգտագործումը կարող է իրականացվել նոր արտադրանքի պատրաստման, հնացած տեխնոլոգիաների փոխարինման ժամանակ: Այսպիսով՝ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության օգտագործման իրավունքի ներքո կարելի է հասկանալ իր տնտեսական գործունեության մեջ իրավատիրոջ կողմից առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների օգտագործման և կիրառման ցանկացած գործողությունների իրականացման հնարավորությունը:

Հիմք ընդունելով իրականացված վերլուծությունը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է բացի վերը շարադրված օրենսդրական փոփոխություններից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով՝ առանձին հոդվածի տեսքով, օրենսդրական սպառիչ ամրագրում տալ նաև առևտրային գաղտնիքի սուբյեկտներին պատկանող քննարկված իրավագործություններին: Առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվության նկատմամբ իրավատիրոջ փաստական մենաշնորհին իրավա-

¹ St' u Гуляева Наталья Сергеевна, коммерческая тайна в предпринимательской деятельности, сравнительно-правовое исследование законодательства РФ, зарубежных государств и международно-правового регулирования, Специальность 12.00, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2002, էջ 21:

կան ամրագրում տվող նորմի ներմուծումը ՀՀ քաղաքացիական օրենսդրությունն որոշ չափով հստակություն կմտցնի չբացահայտված տեղեկատվության առավել չկարգավորված առևտրային գաղտնիքի պաշտպանության ոլորտում՝ որոշ չափով կանխարգելելով սուբյեկտների իրավունքների ոտնահարումը:

*Арус Айрапетян
Аспирант кафедры гражданского права ЕГУ*

ПРАВОМОЧИЯ СУБЪЕКТОВ ПРАВА НА КОММЕРЧЕСКУЮ ТАЙНУ:

В статье рассматриваются правомочия субъектов права на коммерческую тайну, в связи с чем также теоретические проблемы, проблемы и конфликты законодательного регулирования связанные с их понятием и классификацией. В доктрине гражданского права нет единого подхода к вопросу классификации правомочий субъекта на коммерческую тайну, в связи с чем в статье выявляется, более разумная для применения и вытекающая из практики, классификация правомочий субъектов коммерческой тайны. Впоследствии, под правомочиями субъектов коммерческой тайны предлагается рассматривать следующие правомочия: право субъекта считать определенную информацию коммерческой тайной; право субъекта использовать любой, необходимый, законом не запрещенный способ и средство для сохранения конфиденциальности информации, составляющей коммерческую тайну; право субъекта требовать от третьих лиц воздержаться от незаконного завладения информацией, составляющей коммерческую тайну; право субъекта требовать от третьих лиц возмещать ущерб, нанесенный вследствие незаконного использования коммерческой тайны; право субъекта свободно, по собственному усмотрению распоряжаться коммерческой тайной; право субъекта свободно использовать коммерческую тайну. В статье предлагается закрепить перечисленные правомочия в законодательном порядке в виде отдельной статьи Гражданского Кодекса РА.

В исследовании анализируются «Концепция внесения поправок в десятый раздел Гражданского Кодекса РА» настолько, насколько оно предусматривает законодательные изменения в нормы Гражданского Кодекса РА регулирующие вопросы связанные с правомочиями

субъектов права на коммерческую тайну: отдельные предложения авторов представляются оправданными и необходимыми, другие - нет. На основании этого рекомендуется закрепить отдельные регулирования на законодательном уровне, дополняя или изменяя соответствующие нормы Гражданского Кодекса РА.

В статье также анализируются понятия и признаки правомочий субъектов коммерческой тайны с учетом законодательного регулирования и точек зрения различных авторов. В результате этого, кроме общепринятых признаков, закрепленных в нормативных актах, проанализированы проявляющиеся признаки, что обусловлено развитием рыночных отношений.

Таким образом, по результатам исследования выявлены определения правомочий субъектов права на коммерческую тайну, их классификация, необходимые законодательные изменения и дополнения в соответствующие нормы законодательства РА, что следует иметь в виду во время правоприменения и последующих законодательных изменений в сфере гражданского права.

Arus Hayrapetyan
PHD Student of the YSU Chair of Civil Law

THE RIGHTS OF THE SUBJECTS OF THE RIGHT TO THE TRADE SECRET

The article distributes the rights of the subjects of the right to the trade secret, and therefore analyzes the theoretical problems, gaps and conflicts related to the legislative regulations of their notion and their classification. In the doctrine of civil law there is no consensus on the classification of the rights of the subjects of a trade secret so the article reveals the more reasonable and practice resulted classification of the rights of the subjects. Subsequently, the following rights are suggested to be considered under the competences of the subjects of the trade secret: the right of the subject to consider the specific information as a trade secret; the right of the subject to use any, necessary ways and means not prohibited by law, to preserve the confidentiality of the information constituting a trade secret; the right of the subject to demand from the

third parties to refrain from misappropriation of information constituting a trade secret; the right of the subject to demand from third parties to compensate the damages caused by the illegal use of a trade secret; the right of the subject to dispose the trade secret freely, in his sole discretion; the right of the subject to use the trade secret freely. The article proposes to consolidate the listed rights in the law as a separate article of the Civil Code of the Republic of Armenia.

The study analyzes the "Concept of the Amendments in the Tenth Section of the Civil Code of the Republic of Armenia" as far as it stipulates changes in the legislative rules of RA Civil Code regulating issues related to the rights of the subjects of the right to the trade secret: some proposals of the authors are considered to be justified and necessary, others - not. On this basis, it is recommended to fix some regulation at the legislative level, supplementing or amending relevant rules of the Civil Code of the Republic of Armenia.

The article also analyzes the concepts and features of the rights of subjects of the trade secret, taking into account the legislative regulatory and the points of view of different authors. As a result, in addition to common features set out in the regulations manifesting signs are also analyzed, which arise due to the development of market relations.

Thus, the study reveals certain rights of the subjects of trade secret law, their classification, and necessary legislative amendments to the relevant rules of the RA legislation, which should be taken into account during the enforcement of the discussed rules and upcoming legislative changes in the sphere of Civil Law.

Բանալի բառեր. *անտրային գաղտնիք, նոու-հաու, անտրային գաղտնիքի սուբյեկտ, իրավագործություն, իրավունք, տեղեկատվություն, տեղեկություն, դասակարգում, քաղաքացիական օրենսգիրք*

Ключевые слова: *Коммерческая тайна, ноу-хау, субъект коммерческой тайны, правомочие, право информация, сведения, классификация, Гражданский кодекс*

Keywords: *Trade secret, know-how, subjects of trade secrets, power, right, information, data, classification Civil Code*